### Գ.

Աւետարանը գրուած է «ձեռամբ Իգնատիոսի ապաշնորհ եւ մեղապարտ գրչի ի ՈՁԱ. թուականի ի մեծահռչակ ուխտս Հռովմոսի կոչեցեալ վանք ընդ հովանեաւ սրբոյ Կարապետին ի մէջ սուրբ եղբարց»։ Ղուկասի վերջում գրիչը մի փոքրիկ նկատողութիւն ևս ունի իւր մասին, որի մանրամասնութիւններն անյայտ են. «Աւրհնեալ է Ած. յամենայն սրբոց։ ամէն։ որ զերծայ ի դառն կապանաց».

արդեօ՞ք իրական կապանքից էր ազատուած, թէ կապանքի ենթարկուելու վտանգից. ինչո՞ւ համար էր կապանքի ենթարկուած, և ի՞նչպէս ազատուեցաւ, չգիտենք։

Իգնատիոսի գրչութեան նմանահանութիւնները բնագրից՝ մեծ երկաթագրով եւ



Պատկեր 2

յիշատակարանից՝ միջին երկաթագրով, տուել ենք մեր Քարտէզ Հայ Հնագրութեան աշխատութեան մէջ(1), որ աւելորդ

(1) Գրչութեան Արուեստը Հին Հայոց մէջ. մասն Գ. Քարտէզ Հայ Հնագրութեան. Վաղարշապատ, 1913. §. 77 եւ 78։